ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ ------------------------------------------

«--30--» ---08-----------------------------

2022 թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Արազափի Թ.Հուրյանի անվ. միջն.դպրոց <<ՊՈԱԿ>>

5-րդ դասարան

Հարությունյան Սեդա Արտավազդի

« 2022- 2023» ուսումնական տարի

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

.Դասարանի ընդհանուր բնութագիրը __Այս ուստարում 5-րդ դասարանում կա 13 սովորող `6 `տղա , 7 աղջիկ: Դասարանի կորիզը կազմում են ակտիվ և աշխույժ երեխաներ: Բոլորն ընկերասեր են, հանդուրժող, դասարանում տիրում է առողջ մթնոլորտ: Ընդհանուր առմամբ երեխաները ձգտում են ունենալ բարձր առաջադիմություն:

.ՈՒՍՈՒՄՆԱ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ__- Նախատեսել եմ այս ուստարում սովորողների հետ տարբեր թեմաներով անցկացնել զրույցներ: Համավարակի պայմաններում սովորողին հիշեցնել իր վարքի, գրագետ լահվածքի, դիմակի ճիշտ կրման, ձեռքերի ճիշտ ախտահանման և նմանատիպ շատ հարցերի հետ, նաև պարտադիր ջերմաչափում, սոցիալական հեռավորության պահպանում, սանիտարահիգենիկ պայմանների պահպանում: Ուշադրություն դարձնել, որ բացառվի հիվանդ սովորողների մուտքը դպրոց: Իրականացնել ուսումնադաստիարակչական աշխատանքներ, համագործակցել ծնողների հետ, հետևել սովորողների հաճախումներին, արգուկանոնին, հանդերձանքին :

Հետևել սովորողների ուսումնական գործընթացին, կատարել դասալսումներ, կապ հաստատել ծնողների հետ և ուսումնական պրոցեսի հետ ապվաց խոչնդոտներ առաջանալու դեպքում հնարավորինս օգնություն ցուցաբերել սովորողին:

Հոգևոր դաստիարակություն __ Մենք քրիստոնյա ժողովուրդ ենք, ուստի շատ կարևոր է, որ սովորողները գիտակցեն և արժևորեն մեր առաքելական եկեղեցու դերն ու նշանակությունը հայ ժողովրդի կյանքում: Խոսել այն եկեղեցական տոների մասին, որոնք դարձել են մեր առօրյայի մի մասը:

. Գեղագիտական դաստիարակություն _ Գեղագիտական դաստիարակությունն անձի ներքին աշխարհի բնութագիրն է: Զրույցներ բնության, արվեստի, մարդկային վարքագծի, գեղեցիկ աշխատանքի մասին, որոնք կնպաստեն սովորողների գեղագիտական ճաշակի բարձրացմանը:

Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն- Սովորողները պետք է սիրեն և ճանաչեն իրենց երկիրն ու նրա պատմությունը: Ուստի պետք է նպաստել հայրենասիրական դաստիարակության զարգացմանը, հայրենիքի հանդեպ պատասխանատվության գիտակցմանը, պատրաստակամությանը հայրենիքի պաշտպանության:

## ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՀԻՄՆԱԿԱՆԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| | | |
|---|---|---|
| | Սեպտեմբեր | |
| | Գիտելիքը ուժ է | |
| | Դպրոց հաճախելու կանոններ,համաճարակային իրավիճակից ելնելով `սովորողների իրավունքներն ու պարտականությունները. | |
| III | Անկարողությունը մեծագույն արժեք. ՀՀ պետական խորհրդանիշները. | |
| | Դասարանական աշակերտական խորհրդի ընտրություն. | |
| | | |
| | Հոկտեմբեր | |
| | Աշակերտական ինքնավարության օր՝ուսուցչի դերում այսօր ես եմ. | |
| | Հետաքրքիր է անհասկանալի հարցերի պատասխանները գտնելը. զրույց. | |
| | ՈՒզում եմ օգնել ուրիշներին և ինքս էլ դիմեմ նրանց՝օգնության համար. | |
| | Նոյեմբեր | |
| | Ծանոթություն աշակերտական պարտականություններին. | |
| | Խառնված տիպերը՝ ես իմ ընկերոջ աչքերով. | |
| | Քաղաքավարություն ամեն օր/սովորում ենք քաղաքավարության կանոններ. Կազմում ենք դասարանի կանոնները. | |
| | ՈՒնեմ արդյոք վնասակար սովորություններ. | |
| | Որքանով ենք մենք պատրաստ բնական և տեխնածին աղետներին. | |
| | Դեկտեմբեր | |
| | Իմ նախասիրությունները. | |
| | Նախապատրաստվում ենք ամանորյա միջոցառման. | |
| | << Տարեմուտի խոհեր>>. Միջոցառում. | |
| | Հունվար | |

| | | |
|---|---|---|
| | Էթիկա և էսթետիկա. լինենք ավելի բարեկիրթ. | |
| II | Առնո Բաբաջանյան . Երաժշտության ուժը. | |
| II | Հզոր ու հպարտ հայոց բանակ. | |
| | Փետրվար | |
| | Կրթությունը գիտության մայրն է | |
| | <<Տյառնընդառաջ>> միջոցառում. | |
| | Կարդում ենք միասին. | |
| I | Խոսքի կուլտուրա. | |
| | Մարտ | |
| II | Ջանասիրություն և բարեխղճություն. | |
| V | Ճանապարհային երթևեկության կանոններ. | |
| / | Նկարում ենք միասին. | |
| | | |
| | Ապրիլ | |
| /I | Կատակում ենք միասին .Ծիծաղի օր. | |
| /II | Ինչպես հոգ տանել բույսերի և կենդանիների մասին. | |
| /III | << Ես հոգատար եմ բնության հանդեպ>>. | |
| X | Հայոց մեծ եղեռնի հիշատակի օր. | |
| | Մայիս | |
| X | Կառուցենք մեր երկիրը. | |
| XI | Իմ սուրբ հայրենիք. | |
| XII | Իմ վախերը. | |
| XIII | Բացահայտում ենք մեր հայրենիքը. Էքսկուրսիա. | |